

Հ Ր Ա Վ Ե Ր

«Յուրում» Ընկերության թիվ 1510 ծածկագրով բաց մրցույթի

Հրավերի կառուցվածքը

1. Հայտի ներկայացման պահանջները
2. Գնման առարկայի բնութագիրը
3. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը
4. Հայտերի գնահատման և մրցույթի ամփոփման կանոնները

1. Հայտի ներկայացման պահանջները

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Հայտեր կարող են ներկայացնել բոլորը՝ անկախ նրանց՝ օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք՝

- 1) դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- 2) ունեն ժամկետանց պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
- 3) գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող 3 (երեք) տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
- 4) որոնք չունեն գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- 5) որոնք չունեն համապատասխան գործունեություն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա (ներ) (անհրաժեշտության դեպքում):

Մասնակցի պահանջով Պատվիրատուն կարող է տրամադրել հայտի ընդունման մասին տեղեկանք:

Հայտերում ներկայացվող գնառաջարկները պետք է լինեն **առանց ԱԱՀ**, ներկայացված լինեն նաև Excel/կամ համարժեք ձևաչափով և ունենան գաղտնաբառ: Գաղտնաբառերը պետք է ներկայացվեն փակ ծրարով, առաջարկների հետ միասին:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի կողմից կարող են վերադարձվել:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 5 (հինգ) օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող 3 (երեք) օրվա ընթացքում:

Հայտերը պետք է ներկայացվեն փակ ծրարներով (մեկ բնօրինակ և մեկ պատճեն), կնքված և ստորագրված ծրարների փակվող(սոսնձվող) հատվածում:

Ծրարների վրա հայտը կազմելու լեզվով պետք է նշված լինեն.

- ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),
- բ) Մրցույթի ծածկագիրը,
- գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» նշումը,
- դ) Մասնակցի անվանումը (անունը), իրավաբանական հասցեն, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:
- ե) համապատասխանաբար “բնօրինակ” և “պատճեն” բառերը

Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև ՀՀ Օրենսդրությանը համապատասխան Պայմանագրի կնքումը, սահմանված կարգով Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, մրցույթի արդյունքների ամփոփումը, հայտի մերժումը կամ սույն Մրցույթը չկայացած հայտարարվելը:

Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով, իսկ փոխարժեքը սահմանված չլինելու դեպքում Ընկերությանը սպասարկող առևտրային բանկերի կողմից տվյալ օրը առաջարկվող Ընկերության համար լավագույն փոխարժեքով:

Սույն մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

2. Գնման առարկայի բնութագիրը

Յուրքում ընկերության հիմնական միջոցների և պաշարների ապահովագրություն:

Վերոնշյալ գնման խնդրո առարկա հիմնական միջոցների ու պաշարների ցանկը հասանելի է ցպահանջ էլեկտրոնային և/կամ թղթային տարբերակով՝ սույն հրավերի 3.5 հավելվածում նշված Համաձայնագրի ներկայացման պահից: Տվյալ անձը պետք է ունենա նաև համապատասխան լիազորագիր, եթե նա չի հանդիսանում ընկերության տնօրենը:

Ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերն են.

- Մրցույթի մասնակցության գրավոր հայտարարության լրացում (Հավելված 1)
- Մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարության լրացում (Հավելված 2)
- Մասնագիտական ընդհանուր փորձառության մասին տեղեկանք (հավելված 3)
- Մասնագիտական համանման (նմանատիպ) փորձառության մասին տեղեկանք (Հավելված 4)
- Տեղեկատվության չբացահայտման համաձայնագիր (Հավելված 5)

Մրցույթի փաթեթը ներկայացնող անձը պետք է ունենա համապատասխան լիազորագիր, եթե նա չի հանդիսանում տվյալ ընկերության տնօրենը:

Սույն հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում կարող է մերժել և նույնությամբ վերադարձնել ներկայացնողին:

3. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը

Փաստաթղթի տեսակը	Տվյալ մրցույթին ներկայացման անհրաժեշտությունը (այո/ոչ)
1) Մրցույթին մասնակցելու գրավոր հայտարարություն և գնառաջարկ (տես հավելված 3.1)	այո
2) Սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունն (տես հավելված 3.2)	այո
3) Մասնագիտական ընդհանուր փորձառության մասին տեղեկանք (տես հավելված 3.3),	այո
4) Մասնագիտական համանման փորձառության մասին տեղեկանք (տես հավելված 3.4),	այո

4. Հայտերի գնահատման և մրցույթի ամփոփման կանոնները

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Հայտերը գնահատվում են հաշվի առնելով 3 հիմնական գործոնները

1. Մասնակցի որակավորում – (ՄՈ),
2. Մասնակցի տեխնիկական առաջարկ – (ՄՏ),
3. Մասնակցի ֆինանսական առաջարկ – (ՄՖ),

Մասնակցի ընդհանուր գնահատականը (ԸԳ) որոշվում է վերոնշյալ 3 ասպեկտների գնահատականների միջին կշռված եղանակով, ըստ ետևյալ բանաձևի.

$$(ԸԳ) = (ՄՈ) \times Կ_21 + (ՄՏ) \times Կ_22 + (ՄՖ) \times Կ_23$$

Որտեղ՝ Կ₂₁, Կ₂₂, Կ₂₃ գործակիցները հանդիսանում են համապատասխանաբար ՄՈ, ՄՏ, ՄՖ կշիռները: Սույն մրցույթի համար առկա կշիռները կազմում են՝

N	Կշիռը	Կշռի արժեքը
1	Կ ₂₁	...
2	Կ ₂₂	...
3	Կ ₂₃	...
	Ընդամենը՝	1.00

Սույն մրցույթում հայտերի բացման տարբերակը հետևյալն է.

Տարբերակ 1-ին: Մրցույթի ողջ փաթեթը (որակավորման, տեխնիկական և ֆինանսական առաջարկները բացվում են մրցույթի հայտարարված բացման օրը միաժամանակ:	✓
Տարբերակ 2-րդ: Ստուգվում է մասնակցի որակավորումը և առաջնահերթ բացվում է տեխնիկական առաջարկը (առանց ֆինանսական առաջարկի բացելու): Տեխնիկական առաջարկն ընդունելի/բավարար լինելուց հետո նոր բացվում է ֆինանսական առաջարկը:	

Ընտրված Մասնակիցը հայտարարվելուն հաջորդող 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին, ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը, ինչպես նաև, ըստ Պատվիրատուի հայեցողության՝ Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը, ընդ որում՝ պայմանագրի նախագիծը սկսվում է մշակվել/բանակցվել Ընտրված մասնակցի հետ համատեղ:

Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով ծանուցում է գնումների մրցութային գործընթացի բոլոր Մասնակիցներին վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման արդյունքների մասին:

Եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և Պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը, ապա Մասնակիցը կարող է զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, իսկ՝ UCOM Ընկերությունն իրավասու է դառնում բռնագանձել մասնակցի կողմից տրված հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքը: